07.10.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի գրադարանավարներ,

Գրադարանային համակարգի ներկայացուցիչներ

Ընդունեք ջերմագին բարեմաղթանքներս և շնորհավորանքներս ձեր մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա առթիվ:

Արդեն 11 տարի հոկտեմբերի 7-ին նշում ենք Գրադարանավարի օրը՝ կարևորելով և արժևորելով գրադարանավարի աշխատանքը:

Գրքասերները լավ կիմանան գրքի պահապանների դերը: Գրադարանները եղել են մեր մանկության ուղեկիցները, մեր պատանեկության ու հասուն կյանքի բարեկամը, որտեղ միշտ սպասում են սիրով, պատրաստ են ևս մեկ գրքի շնորհիվ հարստացնելու մեզ:

Ժամանակի ընթացքում փոխվել են շատ պահանջներ, գրադարանավարի գործի նկատմամբ էլ մեր մոտեցումները կրել են էական փոփոխություններ, սակայն գիրք ընթերցելու մշակույթը չի կորցրել իր գրավչությունն ու արժեքը:

Կրթամշակութային գործընթացներում անփոխարինելի է եղել և մնում գրադարանավրի դերը, որն իր աշխատանքով գրքի զինանոցը պահում է ամուր և պահանջված:

Այսօրվա գրադարաններն էլ ոչ միայն գրքի տուն ու պահոց են, այլ առաջին հերթին կրթական կենտրոններ, մշակութային ինքնատիպ միջավայր ձևավորող հարթակ:

Սևան համայնքում գործող գրադարանները կատարել և կատարում են իրենց առաքելությունը, և հենց գրադարանավարների նվիրումի շնորհիվ է գրադարանը պահպանել իր լավագույն ավանդույթները:

Սևան համայնքում իրենց գործի գիտակ, փորձառու մասնագետների պակաս չկա, որոնք իրենց աշխատանքի շնորհիվ գրադարանավարի մասնագիտությունը դարձրել են հարգանքի ու ակնածանքի արժանի:

Սիրելի գրադարանավարներ

Դուք գրադարանային գործի լավագույն ավանդույթների պահպանողն ու փոխարինողն եք, ձեզանից շատերն իրենց կյանքի զգալի մասը նվիրել են գրադարանային գործին՝ կատարելով իրենց պատվաբեր առաքելությունը, փոխանցելով ընթերցողներին ամենակարևորը՝ սերը գրքի նկատմամբ:

Այսօր Սևան համայնքի գրադարանավարների գործունեությունը միավորվել է «Սևանի Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի շրջանակներում, որտեղ բանիմաց մասնագետների ու նվիրյալների պակաս չկա:

Մեր բարդ ժամանակներում, երբ պարտադրված ենք դիմակայելու մի շարք մարտահրավերների, կարծում եմ, որ գիրքն ու գրականությունը պետք օգնեն և ուղղորդեն, որպեսզի մենք չկորցնենք հայրենապահպանման ու աշխարհաճանաչման իմացությունը:

Հարգարժան գրադարանավարներ

Շնորհակալություն եմ հայտնում ձեզ ձեր նվիրյալ աշխատանքի համար: Առանձնակի շնորհակալություն ոլորտի վետերաններին, որոնց անխոնջ աշխատանքի շնորհիվ Սևան համայնքում գործող գրադարանները չփակեցին իրենց դռները ընթերցողների առաջ, մնացին սպասված ու հարազատ վայր տարբեր տարիքի գրքասերների համար:

Հարգելի գրադարանավարներ, գրադարանային գործի նվիրյալներ

Ընդունեք իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու շնորհավորանք-բարեմաղթանքները ձեր մասնագիտական տոնի առթիվ, ցանկանում եմ ձեզ բարեկեցություն և առողջություն, լավատեսություն և երկարակեցություն, խաղաղ երկնքի տակ ապրելու և անվտանգ, ապահով ու արժանապատիվ պայմաններում աշխատելու հնարավորություն: